ՀՏԴ : 78(479.25)+7

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ»-Ը՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 90-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ*

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ 2022 թ. դեկտեմբերի 1–2 գումարվեց «Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնհինգերորդ նստաշրջան»-ը՝ նվիրված Հայաստանի կոմպոզիտորների միության հիմնադրման 90-ամյա հոբելյանին:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին երիտասարդ արվեստաբաններ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից (ԱԻ), Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայից (ՀԳՊԱ), Ք. Քուչնարյանի անվան արվեստի դպրոցից, Երևանի պետական համալսարանից (ԵՊՀ), Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանից (ՃՇՀԱՀ), Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտից (ԵԹԿՊԻ), նաև մեկ մասնակից՝ Չինաստանից (հեռավար):

Նստաշրջանի բացման խոսքում ԱԻ տնօրեն, արվ. դ., պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը կարևորեց երիտասարդ հայ արվեստաբանների գիտական նստաշրջանների դերը հայ արվեստագիտության, ինստիտուտի պատմության մեջ. «Այս նստաշրջանների կորիզն Արվեստի ինստիտուտի գիտաշխատողներն են, սակայն դրանք համախմբում են արվեստի ոլորտում մնացած ԲՈՒՀ-երի, թանգարանների երիտասարդ հետազոտողներին նույնպես: Այս միջոցառումների ընթացքում տեսնում ենք, թե ինչ ներուժ կա, ինչ հերթափոխ ունի արվեստագիտությունը, և միշտ շատ ուրախանում ենք, որ արվեստագիտությունը չի ծերանում, մենք ունենք արժանի հերթափոխ, մեր շարքերն անընդհատ համալրվում են երիտասարդներով»:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ողջունելով նստաշրջանի մասնակիցներին, նշեց. «Այս գիտական նստաշրջանները լավ դպրոց են երիտասարդ գիտնականների համար՝ փորձարկելու իրենց աշխատանքի առաջին արդյունքները: Այս միջոցառումները շատ օգտակար են և պետք է լինեն շարունակական: Ուզում եմ դիմել երիտասարդներին. դուք ընտրել եք հրաշալի մասնագիտություն, ձեր մասնագիտությունը ոչ միայն հետաքրքիր է ու հեռանկարային, այլ նաև շատ գայթակղիչ: Դուք միշտ փնտրում եք գեղեցիկը և նկարագրում, բացահայտում այն: Սա գնահատվում է գիտական հանրության և հասարակության կողմից: Արվեստի ինստիտուտում ստեղծված են բոլոր պայմաններն արդյունավետ գիտական աշխատանք կատարելու համար»:

---

* Ներկայացվել է 04. I. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:

ԱԻ գիտական խորհրդի անդամ, ԵԹԿՊԻ ռեկտորի պաշտոնակատար, բ. գ. դ. Լիլիթ Արզումանյանն իր ելույթում ասաց. «Այսօրվա մեր քաղաքական, հոգեբանական, բարոյական ծանր իրավիճակում գիտությունը հույս և հավատ է տալիս, որ կյանքը շարունակվում է, և երիտասարդները շարունակում են ստեղծագործել: Ուզում եմ շեշտը դնել սերնդափոխության վրա և նշել, որ այս առումով մեծ դերակատարություն ունի Արվեստի ինստիտուտի ղեկավարությունը, որ կարողացավ ձեռքն անընդհատ պահել զարկերակի վրա, բաց չթողեց լավ կադրերին: Սա համարում եմ մեծ և կարևոր աշխատանք: Հաջողություն եմ ցանկանում նստաշրջանի մասնակիցներին, հույս ունեմ և հավատում եմ, որ այս գործընթացը շարունակական է լինելու»:

ԱԻ գիտական խորհրդի անդամ, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Սաթյանը, ողջունելով և շնորհավորելով նստաշրջանի մասնակիցներին, ասաց. «Ինձ համար «երիտասարդ» հասկացությունը շատ հարաբերական է, որովհետև երիտասարդ ժամանակ անում են այն քայլերը, որոնք երբեք հետո չեն անում, և այն համարձակությունը, որը նրանք դրսևորում են երիտասարդ ժամանակ, հետագայում չեն դրսևորում: Առհասարակ, երիտասարդը պետք է բոլոր ուղղություններով աշխատի, մտածի և անի այն, ինչը տալիս է իրեն նոր հնարավորություններ: Շնորհավորում եմ բոլորին, ովքեր գիտակցում են, թե ինչ կարևորություն ունի արվեստը մարդկության զարգացման գործում»:

Այնուհետև ԱԻ տնօրեն Ա. Ասատրյանը Գիտության համաշխարհային օրվա կապակցությամբ ակադեմիկոս Յու. Սուվարյանին հանձնեց ինստիտուտի «Գիր գնահատանքի»: Ա. Սաթյանին շնորհվեց վաստակագիր՝ ծննդյան 75-ամյա հոբելյանի կապակցությամբ, հայ երաժշտարվեստում ունեցած ծանրակշիռ վաստակի համար: Վաստակագրեր շնորհվեցին նաև բ. գ. դ. Լ. Արզումանյանին՝ հայ արվեստագիտության ասպարեզում ծանրակշիռ վաստակի համար և արվ. թ., ԱԻ ավագ գիտաշխատող Մերի Կիրակոսյանին՝ երիտասարդ արվեստաբանների խորհրդի նախագահի պաշտոնում կատարած երկարամյա անբասիր ու բեղմնավոր աշխատանքի համար:

Նստաշրջանի չորս նիստերի ընթացքում ընթերցվեցին 25 զեկուցում, որոնցում ներկայացվեցին արվեստագիտության տարբեր գիտաճյուղեր. Կերպարվեստագիտություն՝ 12 զեկուցում, երաժշտագիտություն՝ 6, ճարտարապետության պատմություն և տեսություն՝ 3, թատերագիտություն՝ 2 և կինոգիտություն՝ 1:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ., դոցենտ Մարտին Հարությունյանը հանդես եկավ «Դիզայնի զարգացումը Սենտ Էտիենում» վերտառությամբ զեկուցմամբ: Բանախոսը Սենտ Էտիենում կատարած տեղային դիտարկումներով և հետազոտություններով ներկայացրեց քաղաքի դիզայնի զարգացման կարևոր գործոններն ու համեմատական վերլուծությամբ անդրադարձավ Երևանի և Սենտ Էտիենի դիզայնի զարգացման միտումներին: «Ռեալիզմը Ռուբեն Արուտչյանի ստեղծագործություններում» զեկուցման մեջ ԵՊՀ դասախոս, արվ. թ. Հռիփսիմե Վարդանյանն անդրադարձավ արվեստագետի ստեղծագործական ուղուն, ձևամտածողությանն ու յուրատիպ արտահայտչաձևերին: Հեռավար ձևաչափով Անի Մարգարյանը (Չինաստան) ներ-

կայացրեց «Զինական թեմաներով նատյուրմորտի ժանրը Հովսեփ Փուշմանի արվեստում» թեման, որում կարևորվեց ու վերլուծվեց անվանի նկարչի արվեստում չինական թեմաներով նատյուրմորտի ժանրի դրսևորումը: «Լուսաբաց» գրական-գեղարվեստական ժողովածուի նկարչական բաժինը» զեկուցմամբ հանդես եկավ ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ. Մանե Մկրտչյանը: Բանախոսն անդրադարձավ 1927–1930 թթ. Թիֆլիսում հրատարակված ժողովածուին, ներկայացրեց վերջինիս նպատակները, հինգ համարների ընդհանուր բովանդակությունը և վերլուծեց ժողովածուի նկարչական բաժինը: «Հայաստանի կինոթատրոնների դիզայնը 1960–1970 թթ.» բանախոսության հեղինակն էր ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ասպիրանտ Ռուզաննա Միքայելյանը (գիտական ղեկավար՝ Դ. Քերթմենջյան), ով դիտարկեց նշված ժամանակահատվածում կառուցված տիպային և անհատական նախագծերով կատարված հայաստանյան կինոթատրոնների ինտերիերի դիզայնը, մատնանշեց հորինվածքային, ոճական ու տեխնիկական լուծումները, միևնույն ժամանակ զուգահեռներ անցկացրեց տվյալ շրջանի և նախորդող ժամանակահատվածի կինոթատրոնների ինտերիերների միջև: ԱԻ գիտքարտուղար, արվ. թ. Մարգարիտա Քամալյանը «Էդգար Շահինի ստեղծագործությունը «Անահիտ» հանդեսի էջերում» զեկուցման մեջ շոշափեց Փարիզում հրատարակված «Անահիտ» հանդեսում ֆրանսահայ անվանի նկարիչ Էդգար Շահինի ստեղծագործության լուսաբանման հարցը: ՃՇՀԱՀ դասախոս, արվ. թ. Նարե Նադարյանը «Սասունցի Դավթի կերպարը Արտաշես Հովսեփյանի արվեստում» զեկուցման մեջ ներկայացրեց քանդակագործ Արտաշես Հովսեփյանի՝ ազգային էպոսին և, հատկապես, Սասունցի Դավթի կերպարին նվիրված աշխատանքները: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ Մարի Աբրահամյանը (գիտական ղեկավար՝ Մ. Կիրակոսյան) հանդես եկավ «Ստեփան Աղաջանյանի հոր և մոր դիմանկարները» զեկուցմամբ, որտեղ ներկայացրեց ու վերլուծեց նկարչի արվեստում կարևորվող նշված աշխատանքները: «Կերպարվեստի հարցերը 1950 թվականի «Գեղունի» հանդեսի էջերում» վերտառությամբ բանախոսության հեղինակը՝ ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ. Մերի Կիրակոսյանը, ներկայացրեց Վենետիկում հրատարակված «Գեղունի» հանդեսի 1950 թ. համարում զետեղված՝ կերպարվեստի մասին հոդվածները, լուսաբանեց դրանցում առկա կերպարվեստի հարցերը և տվեց բովանդակային նկարագիր: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող Շուշանիկ Մուրադյանը (գիտական ղեկավար՝ Մ. Քամալյան) «Դիմանկարը Արա Բեքարյանի ստեղծագործության մեջ» զեկուցման շրջանակում առաջին անգամ ներկայացրեց նկարիչ Ա. Բեքարյանի դիմանկարչական ժառանգությանը: «Սրբանկարչության խորհրդանշական պատկերների ժամանակակից միտումները Հայկ Ազարյանի արվեստում» թեման ներկայացրեց ՀԳՊԱ դասախոս, արվ. թ. Գայանե Պողոսյանը, ով անդրադարձավ Հայկ սարկավագ Ազարյանի սրբանկարչության մեջ կանոնիկ խորհրդանշական պատկերագրության ժամանակակից լուծումների վերլուծությանը, կարևորելով նոր շրջանի սրբանկարչության միտումները՝ դիտարկեց նկարչի կերտած սրբապատկերներում Տիրամոր պատկերագրության մեր-

օրյա կերպավորման հարցը: ԱԻ սիյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի կրտսեր գիտաշխատող Արմինե Պետրոսյանը *(գիտական ղեկավար՝ Մ. Կիրակոսյան) հանդես եկավ «Հմայակ Հակոբյանի ինքնադիմանկարները որպես ինքնարտահայտում» զեկուցմամբ և վերլուծեց արվեստագետի վեց ինքնադիմանկար:*

ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: *ԱԻ երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ.* Լիլիթ Արտեմյանը *հանդես եկավ «Կոմպոզիտոր Վարդ Մանուկյանի ստեղծագործական դիմանկարը» զեկուցմամբ, որում առաջին անգամ համակողմանի լուսաբանեց կոմպոզիտորի ծավալած գործունեության երկու հիմնական՝ ստեղծագործական և մանկավարժական ուղղությունները: «Երաժշտական կրթության դերը երեխաների և դեռահասների կրեատիվության զարգացման հարցում» թեման ներկայացրեց Ք. Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի տնօրեն* Էդգար Գյանջումյանը, *ով նկարագրեց երաժշտական կրթության միջոցով ստեղծարարությանը նպաստելու մեխանիզմներն ու դրանց առանձնահատկությունները: ԱԻ երաժշտության բաժնի գիտաշխատող* Լիլիթ Հակոբյանը *(գիտական ղեկավար՝ Ա. Ասատրյան) հանդես եկավ «Նիկոլ Գալանդերյանի մանկական օպերաները» զեկուցմամբ, որտեղ կոմպոզիտորի ստեղծագործության օրինակով բացահայտեց Գալանդերյանի 5 մանկական օպերաների ժանրային առանձնահատկությունները, ոճային հատկանիշներն ու թեմատիկ ուղղվածությունը: «Օրորը ժամանակակից հայ ընտանիքում» թեման արծարծեց ԱԻ ժողովրդական երաժշտության բաժնի գիտաշխատող* Անի Հակոբյանը *(գիտական ղեկավար՝ Ա. Փահլևանյան)՝ ներկայացնելով ժամանակակից մայրիկների միջավայրում իրականացրած հարցումների արդյունքները, որի նպատակն էր հասկանալ, թե բազմազբաղ այս ժամանակաշրջանում հայ մայրիկը ի՞նչ է երգում երեխային քնեցնելիս: ԱԻ երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ.* Գայանե Ամիրաղյանը *ներկայացավ կոմպոզիտոր, խմբավար, Կոմիտասի սան «Վարդան Սարգսյանի դիտարկումները Կոմիտասի «Պատարագի» մասին» զեկուցմամբ, որի հիմքում ընկած է Վ. Սարգսյանի նամակագրությունը Տիրան արք. Ներսոյանի և Թորգոմ արք. Մանուկյանի հետ: «Էդուարդ Հայրապետյանի դաշնամուրային կվարտետը» բանախոսության հեղինակն էր ԱԻ երաժշտության բաժնի հայցորդ* Գոհար Կարապետյանը *(գիտական ղեկավար՝ Մ. Ռուխկյան):*

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: *«Պատմական Անիի շրջանի Կարմիր վանքի Սբ. Աստվածածին եկեղեցու ճարտարապետական շերտագրական ուսումնասիրությունները» զեկուցման մեջ ՃՇՀԱՀ դասախոս, ճարտ. թ.* Դավիթ Նահապետյանը *բացահայտեց կառույցի՝ X–XI դդ. պահպանված ուղղահայաց շերտերը, ինչպես նաև՝ XII–XIII դդ. վերակառուցված լինելու հանգամանքը: ԱԻ ճարտարապետության բաժնի ավագ գիտաշխատող, ճարտ. թ., դոցենտ* Արեգ Հասրաթյանի *բանախոսության թեման էր «Սբ. Հռիփսիմե տաճարի վաղմիջնադարյան հորինվածքի վերակազմությունը»: Հեղինակը, հիմք ընդունելով Ն. Տոկարսկու և Ա. Երեմյանի տեսակետները՝ ներկայիս գմբեթը վերակառուցման արդյունք լինելու առնչությամբ, փորձեց վերստեղծել տաճարի նախնական տեսքը: Երևանի Կարմիր կամրջի վերակազմությանն ու վերականգնման խնդիրների հետազոտմանն էր միտված ԱԻ ճարտարապետության բաժնի գիտաշխատող, ճարտ. թ.* Հրանտ Հովսեփյանի *բանախոսութ-*

յունը «Երևանի Կարմիր կամրջի վերակազմությունն ու վերականգնման խնդիրները» վերնագրով զեկուցմամբ:

ԹԱՏԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: *ԱԻ թատրոնի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ, դոցենտ* Անուշ Ասլիբեկյանը *«Համազգային թատրոնի թատերականացված ընթերցումները որպես խաղացանկային նոր երևույթ և հայեցակարգ» բանախոսության մեջ անդրադարձավ թատրոնում թատերականացված ընթերցումների ժանրի ձևավորմանն ու առաջին անգամ հայ թատրոնում ստեղծված խաղացանկային նոր հայեցակարգի կարևորմանը: «Դերասանուհի Սաթենիկ Աղամյանը» զեկուցման հեղինակ, ԵԹԿՊԻ հայցորդ* Սուսաննա Բրիկյանը *(գիտական ղեկավար՝ Գ. Օրդոյան), արխիվային, փաստագրական տվյալների օգնությամբ ճշգրտեց դերասանուհու կենսագրական մանրամասները, ներկայացրեց դերասանական գործունեության ժամանակագրությունը, դերացանկը և որոշարկեց նրա էսթետիկական կողմնորոշումները:*

ԿԻՆՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ: *ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ.* Արսեն Համբարձումովը *«Նոամ Խոմսկու գեներատիվ քերականությունը և կինոստեղծագործության կառուցվածքի որոշ առանձնահատկությունները» զեկուցմամբ անդրադարձավ գեղարվեստական պրոցեսի նշանակությանը:*

Նստաշրջանն անցավ ակտիվ քննարկումների և կառուցողական հարցադրումների առողջ մթնոլորտում:

Գիտաժողովի արդյունքներն ամփոփեց և եզրափակիչ խոսքով հանդես եկավ ԱԻ տնօրեն Աննա Ասատրյանը: *Առաջիկայում զեկուցումները կհրատարակվեն առանձին ժողովածուի տեսքով:*

Դեկտեմբերի 1-ի երեկոյան Երևանի Առնո Բաբաջանյան համերգասրահում տեղի ունեցավ «Ակադեմիական երաժշտական ֆոլկլորագիտության օրախը. անցած ուղին, ներկան և ապագան» վերտառությամբ համերգ՝ նվիրված ԱԻ ժողովրդական երաժշտության բաժնի հիմնադրման 55-ամյակին: Ներածական խոսքով հանդես եկավ ԱԻ տնօրեն Ա. Ասատրյանը, *իսկ միջոցառումը վարեց ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի գիտաշխատող* Անի Հակոբյանը: *Համերգին մասնակցեցին «Գեղարդ» երգեցիկ խումբը, ավանդական երգի-պարի «Կարին», «Նուբար», «Ծովակ» խմբերը:*

ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ